

01/12/2009  
համար 346-Ն

**ԵՐԱՇԵՒՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴԱՍՈՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ  
ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԳ ՆԱԽԱՏԵՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Կանոնակարգը փոփոխվել է՝

Հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 153-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Ղ ՈՒ Մ Է .**

1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված երաշխիքի տրամադրման դասով մեկ պրինցիպալի (ապահովադրի) և (կամ) նրա հետ փոխկապակցված անձանց հետ կնքված երաշխիքի տրամադրման պայմանագրով (պայմանագրերով) երաշխիքի գումարի (ապահովագրական գումարի) չափը չի կարող գերազանցել ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի 10 տոկոսը:

2. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված երաշխիքի տրամադրման դասով բոլոր պրինցիպալների (ապահովադիրների) հետ կնքված երաշխիքի տրամադրման պայմանագրերով երաշխիքի գումարի (ապահովագրական գումարի) չափը չի կարող գերազանցել ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի 50 տոկոսը:

3. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված երաշխիքի տրամադրման դասով գործունեության իրականացման համար ապահովագրական ընկերությունը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) է ներկայացնում երաշխիքի տրամադրման դասով գործունեության կանոնակարգը (կարգ, կանոն, ընթացակարգ, կանոնակարգ), որն առնվազն պետք է սահմանի.

- 1) երաշխիքի տրամադրման կանոնները և վկայագրի օրինակելի ձևը,
- 2) երաշխիքի տրամադրման սակագները և դրանց հիմնավորումը, հաճախորդի վարկունակության գնահատման չափանիշների նկարագրությունը,
- 3) երաշխիքի ապահովման միջոց՝ գրավ կամ վերաապահովագրություն,
- 4) երաշխիքի տրամադրման վերաապահովագրության իրականացում նախատեսելու դեպքում՝ վերաապահովագրողների ցանկը, վերաապահովագրողների ընտրության չափանիշները, վերաապահովագրողների ֆինանսական վիճակի (հուսալիության) գնահատման չափանիշները:

4. Կենտրոնական բանկը կարող է բացի սույն որոշման 3-րդ կետով սահմանված փաստաթղթից, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված երաշխիքի տրամադրման դասով գործունեության իրականացման համար պահանջել նաև երաշխիքի տրամադրման դասով գործունեության իրականացմանն առնչվող այլ փաստաթղթեր ու տեղեկություններ:

5. Սույն որոշման 3-րդ և 4-րդ կետերով սահմանված փաստաթղթերն ու տեղեկություններն ստանալուց հետո՝ 20-օրյա ժամկետում Կենտրոնական բանկի կողմից «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված երաշխիքի տրամադրման դասով գործունեության իրականացումը չթույլատրելու մասին որոշում չընդունվելու դեպքում նշված գործունեության իրականացումը համարվում է թույլատրված, եթե 20-օրյա ժամկետը չի կասեցվել սույն որոշման 6-րդ կետի համաձայն:

6. Սույն որոշման 5-րդ կետով նախատեսված 20-օրյա ժամկետը կարող է կասեցվել մինչև սույն որոշման 4-րդ կետով սահմանված փաստաթղթերի ու տեղեկությունների ներկայացումը: Ընդ որում, այդ փաստաթղթերը և տեղեկությունները ներկայացնելուց հետո «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված երաշխիքի տրամադրման դասով գործունեության իրականացումը չթույլատրելու մասին որոշման կայացման ժամկետը չպետք է գերազանցի մինչև կասեցումն ընկած օրերի և 20-օրյա ժամկետի տարբերությամբ առաջացող օրերի քանակը:

7. Կենտրոնական բանկը կարող է որոշում ընդունել «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 15-րդ կետով սահմանված երաշխիքի տրամադրման դասով գործունեության իրականացումը չթույլատրելու մասին, եթե վտանգվում են ապահովադիրների շահերը և (կամ) ապահովագրական համակարգի (կամ առանձին ապահովագրական ընկերության) հուսալիությունը և (կամ) բնականոն գործունեությունը:

8. Սույն որոշումը չի տարածվում մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը կնքված երաշխիքի տրամադրման ապահովագրության պայմանագրերի վրա՝ բացառությամբ այն պայմանագրերի, որոնք փոփոխվել կամ վերակնքվել են սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո:

9. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ապահովագրական ընկերությունը չի կարող կնքել երաշխիքի տրամադրման պայմանագիր, եթե ապահովագրական ընկերության կողմից մեկ պրինցիպալի (ապահովադիր) և (կամ) նրա հետ փոխկապակցված անձանց հետ կնքած երաշխիքի տրամադրման բոլոր պայմանագրերով ստանձնած պարտավորության (ապահովագրական գումարի) չափը գերազանցում է կամ երաշխիքի տրամադրման նոր պայմանագրի կնքման արդյունքում կգերազանցի սույն որոշման 1-ին կետով սահմանված սահմանաչափը, իսկ բոլոր պրինցիպալների (ապահովադիրների) հետ կնքված երաշխիքի տրամադրման պայմանագրերով երաշխիքի գումարի (ապահովագրական գումարի) չափը գերազանցում է կամ երաշխիքի տրամադրման նոր պայմանագրի կնքման արդյունքում կգերազանցի սույն որոշման 2-րդ կետով սահմանված սահմանաչափը:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության  
Կենտրոնական բանկի նախագահ

Արթուր Ջավադյան